1920Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՔԱՌՅԱՆ Ս.Մ.

Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին «դաշնակցական տիրապետության» դեմ բոլշևիկների գլխավորած քաղաքական և սոցիալ-դասակարգային պայքարի ընդհանուր համալիրում առանձնակի ուշադրության է արժանացել 1920թ. մայիսյան շարժումների համակողմանի ուսումնասիրությունը: Այդ հիմնախնդրով խորհրդահայ կուսակցական և պետական գործիչներն ու պատմաբանները սկսել են զբաղվել արդեն իսկ 1920-ական թվականներից: Որպես կանոն, Հայաստանի խորհրդայնացման և Մայիսյան ապստամբության պատմության հարցերը դիտարկվել են միասնության մեջ, կամ առաջինը համարվել է երկրորդի տրամաբանական շարունակությունը: Այս հարցի ուսումնասիրությանը ժամանակին անդրադարձել են Շ. Հարությունյանը[1] և Պ. Ս.Մայիլյանը հատուկ աշխատությունում[2], որն ունի նաև աղբյուրագիտական արժեք:

Մայիսյան ապստամբության վերաբերյալ պատմագիտական և հրապարակախոսական գրականության մեջ առաջին հեղինակ կարելի է համարել Ալեքսանդրապոլի շարժման ղեկավար Ավիս Նուրիջանյանին: Նա արդեն 1920թ. հունիսի սկզբին Բաքվի «Կոմունիստում» տպագրեց «Ապստամբություն Հայաստանում» հոդվածը, իսկ հուլիսին գումարված Կոմինտերնի երկրորդ կոնգրեսում ներկայացրեց «Կոմունիզմը Հայաստանում» զեկուցումը:

1919-1930-ական թվականներին հրատարակվեցին Ա. Հովհաննիսյանի, Շ. Ամիրխանյանի, Թ. Մանդալյանի, Ա. Խանոյանի, Ա. Մելիք-Շահնազարյանի և այլոց աշխատությունները, որոնք պատմագիտականից զատ, ավելի շատ ունեին հուշագրական-աղբյուրագիտական նշանակություն և քաղաքական-քարոզչական ուղղվածություն[3]: Հրատարակվել են նաև մի շարք ժողովածուներ, որտեղ ամփոփվել են ապստամբության մասնակիցների հուշերը և արխիվային բազմաթիվ փաստաթղթեր[4]: Այս շարքում ուշագրավ են հատկապես Ս. Կասյանի աշխատանքները[5]:

---

[1] Հարությունյան Շ.Ռ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, 1964-1988, Ե., 1990, էջ 333-341:

[2] Մայիլյան Պ.Ս., Հայաստանում սովետական իշխանության հաստատման պրոբլեմը սովետահայ պատմագրության մեջ (ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտոր, Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, 1974, N1):

[3] Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1932, նույնի՝ Համազգային կրիզիսը, Ե., 1926, Ամիրխանյան Շ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Գնահատության փորձ, Մ., 1926, Մանդալյան Թ., Մայիսյան ապստամբությունը, Ե., 1929, Խանոյան Ա., Մայիսյան ապստամբությունը, Ե., 1930, Մելիք-Շահնազարյան Ա., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Ե, 1930:

[4] Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920-1930 (հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Ե., 1930, Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը. նյութեր և փաստաթղթեր), կազմեցին Կ.Ղազարյանը և Մ. Ներսիսյանը, Ե., 1932:

[5] Կասյան Ս., Զախության հիվանդությունը մեզանում (Նոր Աշխարհ, Թիֆլիս, 1922, № 2), նույնի՝ Հայաստանում տնտեսական դասակարգային ստրուկտուրան (Նոր Աշխարհ, 1922, № 1), նույնի՝ Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում (Նորք, 1923, գիրք 3):

Բնութագրական է, որ 1920-1930-ական թվականներին Առաջին Հանրապետության պատմության հարցերին նվիրված գրականությունը գերազանցապես միտված էր միայն Մայիսյան ապստամբության պատմության ուսումնասիրությանը, իսկ մյուս հիմնահարցերը գրեթե անուշադրության էին մատնված: Այս հանգամանքը հարկ է բացատրել պատմագիտության պատմակուսակցական բնույթով, պրոֆեսիոնալ պատմաբանների պակասով և, ի հարկե, արդեն իսկ ձևավորվող պատմագիտության ստալինյան հիմնադրույթների հարուցած կաղապարներով:

Քննվող թեմայի գիտական ուսումնասիրության սկզբնավորողը եղավ այդ ժամանակ ՀԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը, որի ծավալուն հոդվածը տպագրվեց արդեն 1923թ.[7]: Ընդհանուր գծերով ներկայացնելով ապստամբության պատմությունը՝ հեղինակը հետևյալ պատգամն է թողնում թեմայի ապագա ուսումնասիրողներին. «Սայթաքումներն անխուսափելի են, բայց և անհրաժեշտ: Քանի որ ղրանով է միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ՝ մոտիկ անցյալի գալիք ուսումնասիրողների համար»[8]:

Հարցին որոշակի քննադատական տեսանկյունից է մոտեցել Դիլիջանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Շավարշ Ամիրխանյանը[9], որը ներկայացրել է ապստամբության պատմության ընդհանրացված ակնարկը: 1927-1928թթ., Մայիսյան ապստամբության նկատմամբ ծագած առանձնակի հետաքրքրությամբ պայմանավորված, կուսակցական մամուլում սկիզբ առավ բանավեճ՝ մտքերի փոխանակություն: Ա.Հովհաննիսյանի և Շ.Ամիրխանյանի վերոնշյալ աշխատությունների քննադատությամբ հանդես եկան Գ.Վանանդեցիս[10], Հ.Դուրգարյանը[11] և ուրիշներ: Հետաքրքիր է Մայիսյան ապստամբությանը վերոհիշյալ հեղինակների տված գնահատականի բազմազանությունը: Աշ. Հովհաննիսյանն այն բնութագրում էր որպես «բանվորական, գինվորական և գյուղացիական լայն մի շարժում», Շ. Ամիրխանյանը՝ «մասսայական, գյուղացիական ապստամբություն», իսկ Հ. Դուրգարյանն այն համարում էր վաղաժամկետ ելույթ, գրեթե արկածախնդրություն՝ զուրկ հասունացած օբյեկտիվ պայմաններից: Ապստամբության մասնակիցներից Թադևոս Մանդալյանը, իր հերթին անվերապահորեն «մերկացնելով» ապստամբության բոլոր քննադատներին, միաժամանակ փորձում է հիմնավորել ՀՀ Դաշնակցության՝ խոշոր բուրժուազիայի կուսակցություն լինելու տեսակետը[12]: Այս առումով, նա իր անհամաձայնությունն է հայտնում մասնավորապես Ա.Հովհաննիսյանի և Շ.Ամիրխանյանի ձևակերպումներին: Ռ. Բորյանն իր երկհատոր աշխատության մեջ խստորեն քննադատում է Արմենկոմի գործունեությունը և կարծում, որ այն գտնվում էր «դաշնակցության գաղափարական ազդեցության ներքո», և ավելին՝

---

[7] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը (Նորք, գիրք 2, ե., 1923, էջ 97-140):

[8] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 97:

[9] Տե՛ս Ամիրխանյան Շ., նշվ. աշխ.:

[10] Տե՛ս Վանանդեցի Գ., Մայիսյան ապստամբության գնահատման փորձի առթիվ (Կոմունիստ, 1927, N. 6):

[11] Տե՛ս Դուրգարյան Հ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (Շ.Ամիրխանյանի գրքի առթիվ) (Կոմունիստ, 1927, N 9-10):

[12] Տե՛ս Մանդալյան Թ., նշվ. աշխ.:

«Արմենկոմում նստած էին պատահական անձինք»[12]:

Ուշագրավ է «Մայիսյան ապստամբություն» գրքույկը[13], որտեղ, բուն նյութից բացի, շատ ընդհանրացված և համառոտ ներկայացված են 1918-1920թթ. հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ընագավառները: Այն կազմողը «սուտ» է համարում, թե անդրկովկասյան հանրապետությունները անկախ էին, ինչը սոսկ բանվորներին և գյուղացիներին «խաբելու միջոց էր», իսկ իրական տերերը «անգլիական, ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստներն էին»[14]:

Խորհրդահայ պատմագիտության մեջ Առաջին հանրապետության պատմության տարբեր հարցերին, որպես գիտական թեմա, առաջինն անդրադարձել է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, որը քննվող թեման ներկայացրել է ընդհանրացված ձևով[15]: Ըստ հեղինակի, Առաջին հանրապետությունն «անվերջ պատերազմների ու ջարդերի մի զարհուրելի թատերաբեմ էր, անընդհատ պատերազմական գործողությունների մեջ էր գտնվում և շարունակ կռիվներ էր մղում հարևան երկրների հետ»[16]: Անդրադառնալով կառավարող ՀՀ Դաշնակցության ազգային-գյուղացիական քաղաքականությանը և բանվորության նկատմամբ ունեցած վերաբերմունքին՝ Մ. Ներսիսյանը կատարել է ժամանակին հատուկ եզրակացություններ: Այսպես, նրա կարծիքով, այդ կուսակցությունն իր տիրապետության ընթացքում վարել է հակաբանվորական, բուրժուական, հակահեղափոխական քաղաքականություն: Անդրադառնալով մինչև 1920թ. տեղի ունեցած բանվորական մի շարք աննշան ելույթների՝ հեղինակը չափազանցում է դրանց գերը, գտնելով, որ «այդ ցույցերը, իրոք, այնքան հուժկու, մասսայական և մարտական էին, որ ցնցեցին դաշնակ պետականության հիմքերը, այնքան հեղափոխական բնույթ ունեին, որ Դաշնակցությունը սարսափի մատնվեց»[17]:

1920-1930-ական թվականների խորհրդահայ պատմագիտության կողմից Մայիսյան ապստամբության պատմությանը նվիրված հետազոտություններից պետք է առանձնահատուկ հիշատակել Կ.Ղազարյանի գրած շատ ծավալուն և հանգամանալից գիտական առաջաբանը[18]: Տալով ապստամբության տեսա-մեթոդական դնահատականները՝ նա այն «էպիզոդիկ և կղզիացած երևույթ» չի համարում, քանզի այն նախորդ շրջանի հեղափոխական շարժումների զարգացման հետևանք էր, որը նախապատրաստվել էր ոչ շուտ, քան 1918թ.: Ավելին, հեղինակն այն աներկբա համարում է ՀՀ Դաշնակցության վարած հակաաշխատավորական սոցիալ-տնտեսական քաղաքականության հետևանք: Կ. Ղազարյանը մի շարք հարցերի վերլուծման նկատմամբ ցուցաբերում է միակողմանի և դասակարգային դիրքորոշում: Այսպես, նա առաջ է քաշում հետևյալ սխալ տեսակետը. «Դաշնակցության ծրագրային և գործնական կյանքի

---

[12] Տե՛ս Борян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М., 1929, с. 101-102, 114.

[13] Մայիսյան ապստամբությունը, 1920-1930, Ե., 1930:

[14] Նույն տեղում, էջ 4:

[15] Ներսիսյան Մ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Ե., 1935:

[16] Նույն տեղում, էջ 33-41:

[17] Նույն տեղում, էջ 41-56:

[18] Տե՛ս Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում ..., էջ 5-68:

նպատակն է եղել,- գրում է նա,- Հայաստանում ստեղծել բուրժուական պետություն՝ իր բոլոր հիմնական և բնորոշ կողմերով՝ կալվածատիրության պահպանմամբ և կապիտալիստական շահագործմամբ»: Այս ամենին զուգահեռ, ըստ նրա, այդ կուսակցությունը «իր գոյության ժամանակամիջոցում» Հայաստանի համար «մեծ պետությունների մանդատն է որոնել, սակայն հայ բուրժուազիայի կուսակցության հիմնական օրիենտացիան եղել է ցարական»:[19]

Մայիսյան ապստամբության կապակցությամբ դիտարկելով ԱՄՆ-ի քաղաքականությունը՝ նա խորապես համոզված և անվարան շեշտում է. «Կարելի է հաստատ ասել, որ ամերիկյան ներկայացուցչության ակտիվ մասնակցությամբ է մշակվել մայիսյան շարժումների դեմ ռազմական գործողությունների պլանը»: Հետաքրքիր է նկատել, որ նրա կարծիքով, հենց մայիսյան շարժումներն էլ բացահայտեցին Հայաստանում ամերիկյան կապիտալի «անսահման իշխանություն ունենալու, երկրի փաստական տեր ու տնօրեն» լինելու փաստը: Այս համապատկերում քննելով հանրապետության սոցիալական դրության սրման հարցը՝ հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանի «ինքնամփոփ վիճակը, տնտեսական և աշխարհագրական կղզիացումը և դաշնակցության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը» երկիրը հասցրեցին «սնանկության և առաջ բերին ընդհանուր կրիզիս», որոնք վերածվեցին ապստամբության[20]:

Պատմական իրականությանն անհարիր է հեղինակի այն պնդումը, որ իբր հանրապետության բանվորության տնտեսական և քաղաքական կյանքն «ավելի վատ է եղել, քան մի որևէ այլ ժամանակ», ինչը, իբր, մայիսյան շարժումների նախօրյակին հանգեցրել է «բանվորական դժգոհությունների, գործադուլների և ցույցերի աննախընթաց աճմանը».[21] Անընդունելի է Կ. Ղազարյանի նաև այն մոտեցումը, որով ՀՀ Դաշնակցության սոցիալ-տնտեսական քաղաքականության «առաջին զոհ» է դիտվում «միանգամայն իրավազուրկ մի մասսա» դարձած բանվորությունը: Ավելին, նա այդ կուսակցության գործունեության ընդհանուր գիծ է համարել հակաբանվորական քաղաքականությունը[22], մինչդեռ, ՀՀ Դաշնակցության մեջ անհամեմատ ավելի շատ բանվորներ են ընդգրկված եղել, քան հայ բոլշևիկյան կազմակերպություններում[23]:

Անարդարացիորեն քանիցս շեշտելով հայ խոշոր բուրժուազիայի ծրագիրը «գիտակցաբար և մեծ հաստատակամությամբ» իրագործելու ՀՀ Դաշնակցության պատրաստակամության մասին՝ հեղինակն այն կարծիքին է, որ այդ կուսակցությունը «չլուծեց, ոչ էլ զրաղվեց» գյուղացիական հարցով: Ընդհանուր գծերով ներկայացնելով հողային քաղաքականությունը, գյուղի ու գյուղացու վիճակը, հողազրկության և սոցիալական չերտավորման մասշտաբները՝ հեղինակը դտնում է, որ ՀՀ Դաշնակցությանը «երբեք գիտականորեն չի ուսումնասիրել Հայաստանի էկոնոմիկայի հարցերը»[23]:

Կ.Ղազարյանն իրավացի է՝ շեշտելով մինչ այդ եղած աշխատություններում Մայիսյան ապստամբության նախօրյակի հեղափոխական շարժումներն ամբողջովին ուսումնասիրված չլինելու փաստը: Մյուս կողմից, նա Մայիսի 1-ը տոնելը պայմանավորում է այն հանգամանքով, որ դրանով ՀՀ Դաշնակցությունը ձգտում էր ցույց տալ մասնավորապես հետևյալը. «1. Հայաստանում գոյություն

[19] Նույն տեղում, էջ 7:
[20] Նույն տեղում, էջ 10 11:
[21] Նույն տեղում, էջ 12-13:
[22] Նույն տեղում, էջ 16-17:
[23] Նույն տեղում, էջ 19-25:

ունեն սոցիալիստական կուսակցություններ, որոնք միջազգային պրոլետարիատի հետ տոնում են մայիսի 1-ը, 2. Այդ կուսակցությունները Հայաստանում ազատ են գործում, 3. Հայաստանում թույլատրվում էր սոցիալիզմի, մարքսիզմի, Երրորդ ինտերնացիոնալի գաղափարների պրոպագանդումը, 4. Մայիսի 1-ի տոնը համայն հայության տոնն է, 5. Հայաստանում տիրողն աշխատավորությունն է, 6. Դաշնակցությունը ողջունում է ռուսական հեղափոխությունը»[24]: Սրա հետ կապված՝ անբավարար է հիմնավորված նրա այն կարծիքը, որ ՀՀ Դաշնակցությունը, տեսնելով աշխատավոր զանգվածների՝ կոմունիստական շարժման մեջ իբր թե «հետզհետե ընդգրկվելը», անհրաժեշտ է համարում «զինվել սոցիալիստական լոզունգներով»[25]: Մինչդեռ, այդ կուսակցությունը հենց սկզբից առաջնորդվել է սոցիալիստական սկզբունքներով: Բավական է հիշատակել, որ դեռ 1907թ. նա անդամակցել էր Սոցիալիստական ինտերնացիոնալին, իսկ մասնավորապես 1920թ. մայիսի 1-ի ցույցին Դաշնակցության անդամ ցուցարարները, իրենց կուսակցության հիմնադիրների նկարներին զուգահեռ, կրում էին Կ. Մարքսի մեծադիր նկարը: Այս կապակցությամբ չափազանցություն պետք է համարել հեղինակի այն պնդումը, որ մայիսի 1-ի դեպքերը ցույց տվեցին, թե, իբր, աշխատավոր զանգվածներն անվերապահ անցել են բոլշևիկների կողմը: Ապստամբությանն Արմենկոմի «ուշացած և անվստահ» միջամտությունը, նրա համոզմամբ, վճռորոշ անդրադարձավ շարժման հետագա զարգացման վրա, քանզի Արմենկոմը բաց էր թողել «հարմար մոմենտը, շարժումների գլուխն անցնելու պատրաստակամությունը»: Փոխարենը, դեպքերը զարգացան «միմիայն տեղական կազմակերպությունների ղեկավարմամբ, այն էլ թույլ, առանց փոխադարձ կապի, կոորդինացիայի, ղեկավարող շտաբի և ռազմական գործողությունների միասնականության[26]:

Անհրաժեշտ է նկատել, որ 1920-1930-ական թվականների խորհրդահայ պատմագիտության կողմից Մայիսյան ապստամբության պարտության պատճառների շարքում բոլշևիկների ղեկավար կառույցների սխալները սովորաբար չեն նշվել, առավել ևս՝ քննադատվել: Այս կապակցությամբ, Կ. Ղազարյանի մոտեցումը բացառիկ բնույթ էր կրում թեկուզ իր որոշ տեսական սխալներով հանդերձ: Հեղինակը հատկապես մանրամասն քննարկում է նաև ապստամբության տարերայնության վարկածի հարցը: Այդ կապակցությամբ նա քննադատում է Ա. Հովհաննիսյանին ու Ս.Կասյանին և, միաժամանակ, տարակուսանք հայտնում, որ ոչ մի հեղինակ, իբր, չի բացատրում, թե «տարերային» ասելով ինչ է հասկանում: Հեռուն գնալով՝ Կ. Ղազարյանը Հայկոմկուսի գնահատման հարցում խստորեն քննադատում է նույնիսկ այնպիսի ուղղափառ հեղինակի, ինչպիսին Ա. Կարինյանն էր: Վերջինիս և մյուսների տեսակետները նա համարում է «բոլշևիզմի հետ ոչ մի կապ չունեցող, պատմությունը և իրականությունը միայն աղավաղող, թարս նկարագրող և կոմկուսի պատմության մեջ օպորտունիստական, հակալենինյան, մենշևիկ-սպեցիֆիկյան գաղափարախոսություն»:[27] Փաստորեն, Կ. Ղազարյանի ինչոր տեղ քաղաքական ընդհանրացումները կրում էին պաշտոնական բնույթ և հավակնում էին լինել խորհրդահայ պատմագրության վերջնական խոսքը: Մանավանդ, եթե նկատի ունենանք Ի. Ստալինից կատարված բազմաթիվ

[24] Նույն տեղում, էջ 41:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում, էջ 43:

[27] Նույն տեղում, էջ 53-66:

մեջբերումները: Ամփոփելով՝ Կ.Ղազարյանը նշում է Մայիսյան ապստամբության պարտության մի շարք պատճառներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին. 1. կոմկուսի որոշ ղեկավար մարմինների, հատկապես Արմենկոմի, «թույլ, ոչ կուռ ու համարձակ» գործունեությունը, միասնական ղեկավարության ու «բոլշևիկյան վճռականության» բացակայությունը, 2. ղեկավարության սխալ և թույլ լինելու հետևանքով բանվորության որոշ մասի պասիվությունը, 3. գյուղացիության թույլ մասնակցությունը, 4. ապստամբության ռազմական տակտիկայի մանրամասն մշակման բացակայությունը, բանակում թույլ աշխատանքը[28]:

Ոչ միայն Մայիսյան ապստամբության, այլև հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության, հասարակական-քաղաքական կյանքի ու սոցիալ-տնտեսական թեմաների, հատկապես հեղափոխական-կոմունիստական շարժումների հետագա ուսումնասիրության տեսանկյունից ծայրահեղ բացասական և արգելակիչ դեր խաղաց Անդրերկրկոմի քարտուղար, Կովկասում Ի.Ստալինի դրածո Լ.Բերիայի՝ պատմագիտության հետ բացարձակապես ոչ մի առնչություն չունեցող և զուտ անհատի պաշտամունքի գովաբանությանը նպատակաուղղված գիրքը[29]: Դրանից հետո սպանվեց Ա.Խանջյանը, իսկ 1936-1938թթ. բռնաճնշումների ենթարկվեցին Արմենկոմի և Մայիսյան ապստամբության ղեկավարներն ու մասնակիցները: Դրանից հետո, բնականաբար, արգելվեցին և շրջանառությունից հանվեցին մասնակիցների դրած գրքույկներն ու հուշերը, փաստաթղթերի ժողովածուները: Փաստորեն, 1921-1936թթ. կատարված ամբողջ պատմագիտական և հուշագրական աշխատանքները համարվեցին «հակախորհրդային»:

Միայն Ի.Ստալինի մահից և հատկապես 1956թ. կայացած ԽՄԿԿ XX համագումարից հետո վերսկսվեց թեմայի ուսումնասիրությունը: Հ. Տոնոյանն առաջիններից մեկը հիմնահարցին անդրադարձավ առանձին աշխատությամբ[30], ապա մեկը մյուսի հետևից սկսեցին հրատարակվել ակադեմիկոս Գ.Ղարիբջանյանի աշխատությունները[31]: Դրանցում Մայիսյան ապստամբության պատմությունը, թեպետ ներկայացված է հնարավորինս մանրամասն և բոլոր շրջանների կտրվածքով, սակայն ժամանակի հեռավորությունից ակնառու է հարցերի վերլուծման նկատմամբ կանխակալ վերաբերմունքը, որը հիմնականում պետք է բացատրել տիրող գաղափարախոսության պահանջներով[32]: Մեծ վերապահությամբ պետք է ընդունել հեղինակի այն միտքը, որ 1920թ. մայիսին զինված ապստամբության միջոցով «դաշնակների» տիրապետության տապալումը և խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում «միանգամայն հասունացած հարց էր»: Մյուս կողմից, դժվար չէ համաձայնվել նրա այն տեղին դիտողության հետ, որ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն և Ռազմա-հեղափոխական

[28] Նույն տեղում, էջ 67-68:

[29] Տե՛ս Բերիա Լ., Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Թիֆլիս, 1935:

[30] Տե՛ս Տոնոյան Հ.Գ., Փառապանծ էջ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից: Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (համառոտ ակնարկ), Ե., 1955:

[31] Տե՛ս Ղարիբջանյան Գ.Բ., Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917-1920 թվականներին, Ե., 1953, նույնի՝ Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին, Ե., 1955, Տե՛ս նույնի՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Ե., 1955:

[32] Ղարիբջանյան Գ.Բ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին, էջ 29-89:

կոմիտեն թույլ տվեցին «լուրջ քաղաքական և ռազմա-ստրատեգիական սխալներ». արդյունքը եղավ այն, որ չկարողացան միավորել Հայաստանի տարբեր շրջանների ապստամբների ուժերը, ցուցաբերեցին «անվճռականություն... թշնամիների նկատմամբ»[33]:

Քննվող թեմայի ուսումնասիրության առումով հատկապես արժեքավոր են ակադեմիկոս Գ. Գալոյանի աշխատությունները, որոնցում հեղինակը հատուկ և մասնակիորեն ներկայացրել է ինչպես Մայիսյան ապստամբության, այնպես էլ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ամբողջական պատմությունը՝ այն շաղկապելով նախորդ և հետագա ռազմաքաղաքական ու դիվանագիտական իրադարձությունների հետ՝ որպես նորույթ հանգամանորեն վերլուծելով ու քննադատելով նաև արևմտյան տերությունների դիրքորոշումը:[34]

Առանձնապես պետք է հիշատակել ակադեմիկոս Ծ. Ազայանի՝ փաստերով հարուստ և դեռևս իրենց պատմագիտական հնչեղությունը պահպանող բազմաթիվ աշխատությունները և հոդվածները: Հեղինակը, խորհրդային պատմագիտության որդեգրած պաշտոնական հայեցակետերի շրջանակներին միանգամայն հավատարիմ մնալով և երկարամյա տարիների աշխատանքի ընթացքում հիմնավորապես ուսումնասիրելով թեման, այն դիտարկել է անդրկովկասյան երկրամասի մասշտաբով և ձգտել է ներկայացնել ժամանակաշրջանի պատմության բոլոր հիմնահարցերի համապատկերը:[35]

1950-1960-ական թվականներին հրատարակված աշխատություններում Մայիսյան ապստամբության թեմային անդրադարձներ եղել են՝ կապված Հայաստանի կոմունիստական կուսակցության կամ խորհրդայնացման ընդհանուր գործընթացի հետ:[36] Սակայն ինչպես, օրինակ, ակադեմիկոս Վ.Միքայելյանն է դիպուկ բնութագրել, մասնավորապես, Ծ.Ազայանի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» գրքի համապատասխան գլուխը, «չի կարելի

---

[33] Նույն տեղում, էջ 91-92:

[34] Տե՛ս Галоян Г.А., Борьба за Советскую власть в Армении, М., 1957, Նույնի՝ Октябрьская Революция и возрождение народов Закавказья, М., 1977, Նույնի՝ Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900-1922, Е., 1969, Նույնի՝ Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М.,1960, Նույնի՝ Մայիսյան հերոսական ապստամբությունը, Ե., 1960, Նույնի՝ Հերոսական մայիսից - հաղթական նոյեմբեր, Ե., 1980, Նույնի՝ Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Ե., 1982, Նույնի՝ Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Ե., 1961:

Ազայան Ծ.Պ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Ե., 1957, Նույնի՝ Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Ե., 1982, Նույնի՝ Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Е., 1962, Նույնի՝ Победа Советской власти и возрождение армянского народа, М., 1981, Նույնի՝ Развал буржуазно-националистической диктатуры дашнаков и победа Советской власти в Армении в 1920 году (История СССР, 1960, N 6).

[36] Տե՛ս, օրինակ՝ Эльчибекян А.М., Установление Советской власти в Армении, Е., 1954, Նույնի՝ Великая Октябрьская социалистическая революция и победа Советский власти в Армении, Е., 1957; Карапетян С.Х., Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской Революции в Армении, Е.,1959, Սահրադյան Ս.Մ., Ռազմառևոլյուցիոն կոմիտեները Հայաստանում, Ե., 1961:

ասել, թե Մայիսյան ապստամբությանը նվիրված էջերը նորություն են»[37]:

1956թ. հետո եղած հրատարակություններից առանձնահատուկ պետք է նշել Հ. Կարապետյանի ուսումնասիրությունը[38], որը, փաստորեն, Մայիսյան ապստամբության վերաբերյալ դրված առաջին և կարելի է նաև ասել՝ միակ հատուկ ուսումնասիրությունն է թե՛ իր ծավալով և թե՛ հիմնախնդրի ամբողջական ներկայացմամբ: Հեղինակը բազմաթիվ հարցերի պատասխանել է փաստերով հիմնավորված՝ տալով արժեքավոր տեսամեթոդական եզրահանգումներ: Ի դեպ, ուշագրավ պետք է համարել այն, որ հեղինակը հնարավորության սահմաններում հավաքել և օգտագործել է կենդանի մնացած մասնակիցների վկայությունները և դրանց վրա հիմնվելով՝ փորձել որոշակի ճշգրտումներ կատարել: Մյուս կողմից, հեղինակը գրեթե զերծ է մնացել ապստամբության հետ կապված հարցերին վերջնական պատասխաններ տալուց:

1920թ. Մայիսյան ապստամբության վերաբերյալ խորհրդահայ պատմագիտության մեջ եղած բազմաթիվ ուսումնասիրություններից հատկապես պետք է առանձնացնել Ա.Մելքոնյանի աշխատությունը[39]: Նրանում հեղինակը հիմնախնդիրը ներկայացրել է ոչ թե շատ աշխատություններին հատուկ միապաղաղ և սխեմատիկ բնույթով, այլ անդրադարձել ու ամենայն մանրամասնությամբ քննարկել է գերազանցապես ապստամբության հետ կապված վիճահարույց հարցերը: Չնայած որոշ դեպքերում առկա մակերեսային ձևակերպումներին, այնուամենայնիվ, նա տվել է հիշյալ հարցերի միանգամայն խոր վերլուծություն՝ չանտեսելով անգամ ամենից չնչին թվացող մանրուքները: Ա.Մելքոնյանը այն եզակի հեղինակներից է, որ ընդհանուր գծերով անդրադարձել է թեմայի պատմագիտական տեսությանը: Փաստորեն, Ա.Մելքոնյանի աշխատությունը անհրաժեշտ է դիտարկել և արժևորել հենց հիշյալ հանգամանքներից ելնելով: Անդրադառնալով թեմայի պատմագրությանը՝ հեղինակն այն դասակարգում է երեք շրջանի՝ 1920-1935թթ., 1935-1953թթ. և 1956թ. հետո: Կարծում ենք, որ Ա.Մելքոնյանի այս բաժանումը կարելի է ընդունել: Ներկայացնելով հարցի վերաբերյալ հիմնական աշխատությունները՝ հեղինակը բացահայտում է դրանց կողմերը և ցույց տալիս թերություններն ու սխալները:[40] Հեղինակին պետք է արժանին հատուցել Մայիսյան ապստամբության ղեկավարներին ու մասնակիցներին, մասնավորապես Ավիս Նուրիջանյանին տրված ընդհանուր առմամբ անկողմնակալ գնահատականների համար:

Հարկ է անդրադառնալ նաև հանրապետության սոցիալ-քաղաքական իրադրությանը Ա.Մելքոնյանի տված մի շարք վիճահարույց գնահատականներին: Մասնավորապես, խնդիրը վերաբերում է հայկական բանակի կառուցվածքին: Այդպես, խոսելով այսպես կոչված խմբապետական զորամասերի մասին, նա նշում է դրանց՝ գերազանցապես «մաուզերիստներով, քրեական տիպերով» համալրված լինելը: Ինչ վերաբերում է կանոնավոր զորամասերին, ապա, հեղինակի կարծիքով, դրանց շարքային զինվորների «ճնշող մեծամասնությունը բոլշևիկորեն էր տրամադրված»[41]: Սակայն նման ձևակերպումների համար հիմնավոր փաստարկներ չկան:

[37] Տե՛ս Լենինյան ուղիով, 1963, N11, էջ 102:

[38] Տե՛ս Կարապետյան Հ.Ս., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920թ., Ե., 1961:

[39] Տե՛ս Մելքոնյան Ա.Հ., Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Ե, 1965:

[40] Նույն տեղում, էջ 5-55:

[41] Նույն տեղում, էջ 88:

Ներկայացնելով 1920թ. մայիսի 1-ի «համաժողովրդական» ցույցերը՝ Ա.Մելքոնյանը եզրակացնում է, որ Հայաստանի աշխատավորների «ճնշող մեծամասնությունը բոլշևիկների կողմն էր, սովետական իշխանություն էր ուզում»[42], իսկ այդ ցույցերի հետևանքով «ցնցվեցին դաշնակցական կառավարության հիմքերը»[43]: Նա միանգամայն անհիմն է համարում գրականության մեջ եղած այն վիճելի պնդումը, ըստ որի, իբր Արմենկոմը ղինված ապստամբության խնդիր չի դրել: Փորձելով ապացուցել այդ կարծիքի սխալ լինելը՝ հեղինակն անդրադառնում է Ալեքսանդրապոլի կոմիտեի հակադիր պլանին՝ ապստամբությունը սկսել ոչ թե Դիլիջանից, այլ հենց Ալեքսանդրապոլից, և ցույց տալիս, որ Արմենկոմը նման սանկցիա չէր տվել: Վերլուծելով այդ ամենը՝ Ա.Մելքոնյանը ճիշտ է եզրակացնում, որ Ալեքսանդրապոլի կոմիտեն վարում էր «անկախ գիծ, նրա կողմից սանկցիա պահանջելը ձևական էր»[44]: Միաժամանակ, քննելով Ալեքսանդրապոլի կոմիտեի՝ ապստամբության սանկցիա տալու որոշման ձգձգման հարցը՝ նա գտնում է, որ այն դրանով վնասեց գործին, քանզի Արմենկոմը «չկարողացավ ճիշտ գնահատել ստեղծված ռևոլյուցիոն իրադրությունը», «ռևոլյուցիայի ուժերը գերակշռում էին ռեակցիայի ուժերին» և հնարավոր էր առանց Խորհրդային Ռուսաստանի ռազմական օգնության տապալել դաշնակցականների իշխանությունը: Դրա համար հեղինակը բավարար է համարում Արմենկոմի «վճռական» քաղաքականությունը[45]:

Ա.Մելքոնյանը հատուկ վերլուծում է Ալեքսանդրապոլի կոմիտեի վարքագիծը:[46] Նրա կարծիքով, կոմիտեն թեպետ «առաջինը վճռական ու համարձակ» քայլերի դիմեց, սակայն միաժամանակ զինված ապստամբության հարցում թույլ տվեց «տակտիկական սխալներ, ցուցաբերեց չտապողականություն, հաշվի չառավ մնացած գավառներում ռևոլյուցիոն ուժերի պատրաստականության վիճակը»: Այդ կապակցությամբ, հեղինակը միանշանակ համոզված է, որ առանց Արմենկոմի հետ համաձայնեցնելու և միայն տեղի ուժերի վրա հենվելով, անմիջապես ապստամբության կուրս վերցնելու կարիք չկար: Իսկ արդեն մայիսի 1-ին Ալեքսանդրապոլից ապստամբության սկսվելուց հետո զինված պայքարի սկզբնավայրի որոշման հարցադրումը նա իրավամբ համարում է «անիմաստ ու անպտուղ»: Ա.Մելքոնյանն այն մասամբ բացատրում է Հեղկոմի կազմի ցրվածությամբ և որոշ մասի արտաքսված կամ ձերբակալված լինելով: Նա նաև նշում է, որ Հեղկոմի՝ Ալեքսանդրապոլում գտնվող անդամները, Ա.Նուրիջանյանի գլխավորությամբ, փաստորեն հակադրվում էին Արմենկոմին: Ինչևէ, այս հարցում ևս մասամբ պաշտպանելով Արմենկոմին՝ հեղինակը նրա վարած գիծը ճկունության և հաստատակամության տեսանկյունից թերի է գտնում:[47] Խնդիրն անաչառորեն դիտարկելով՝ նա եզրակացնում է, որ Ռազմահեղափոխական կոմիտեն «ոչ կարողացավ կանոնավոր հարձակում

[42] Նույն անդում, էջ 93:

[43] Ա.Մելքոնյանին համամիտ է Ռ.Հովհաննիսյանը, ըստ որի՝ «մայիս մեկի տոնակատարություններն բոլշևիկյան ցույցերը ողջ Հայաստանի տարածքին եւ հատկապես Ալեքսանդրապոլի զորավոր ցույցը դաշնակցության մեջ առաջ քաշեցին ճգնաժամի ընթացքին երկիրը առաջնորդելու Ալեքսանդր Խատիսյանի կարողության շուրջ վեճը: Կուսակցության բազմաթիվ արմատականներ Ռուբեն Տեր-Մինասյանի գլխավորությամբ արդեն կոչ կուղղեին կեդրոնաձիգ, հեղափոխական վարչաձևի» (Երկիր, 13. III. 1993):

[44] Մելքոնյան Ա.Հ., նշվ.աշխ., էջ 96-103:

[45] Նույն տեղում, էջ 105:

[46] Նույն տեղում, էջ 108-113:

[47] Նույն տեղում, էջ 119-120:

կազմակերպել, ոչ պաշտպանություն և ոչ էլ նահանջ. նահանջը փաստորեն վերածվեց փախուստի»:[48] Հեղինակն ընդհանուր գծերով անդրադառնում է նաև Քավթառլուի, Կարսի, Կաղզվանի, Սարիղամիշի, Նոր Բայազետի և Դիլիջանի շրջաններում տեղի ունեցած ելույթներին[49]: Ա.Մելքոնյանն ուշագրավ պատմաքննական մեթոդով հանգամանորեն վերլուծում է Մայիսյան ապստամբության պարտության պատճառները[50]: Շեշտելով այն հանգամանքը, որ Մայիսյան ապստամբության հաղթանակի համար օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններն առկա էին, հեղինակը միաժամանակ քննում է նրա պարտության հինգ խումբ պատճառներ: Նախ, նրա կարծիքով, ապստամբությունը պետք եղած չափով չէր նախապատրաստվել, ինչին խանգարել են Արմենկոմի անվճռականությունը և ներկուսակցական տարաձայնությունները, հեղափոխական ուժերի՝ Արմենկոմի կողմից թերագնահատվելը: Նրա քննադատության թիրախ են դարձել և որպես պարտության պատճառ մատնանշվել նաև ռազմահեղափոխական կոմիտեի և նրա տեղական մարմինների կատարած սխալները: Որպես պարտության պատճառ, հեղինակը նշում է նաև հանրապետության կառավարությանը մյուս կուսակցությունների և եկեղեցու ցուցաբերած աջակցությունը: Վերջապես, այդ պատճառների շարքում հիշատակվում է կառավարությանը Վրաստանի և անգլոամերիկյան ուժերի աջակցությունը:

1920թ. Մայիսյան ապստամբության և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հիմնահարցը բավական ակտիվ քննարկվել է նաև սփյուռքահայ (հատկապես դաշնակցական) հեղինակների կողմից: Թեմայի սփյուռքահայ ուսումնասիրության դրվածքն ընդհանուր գծերով պատկերացնելու նպատակով բազմաթիվ հեղինակների աշխատություններից հիշատակենք Կարո Սասունու հուշագրությունը:[51] Նախ և առաջ պետք է նշել, որ այս գրքի արժեքն այն է, որ հեղինակը քննվող իրադարձությունների ականատեսն է և դրանց հետևանքով ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակը կարգավորող պետական գործիչներից մեկը: Ի վերջո, պետք է նկատի ունենալ նաև հեղինակի դաշնակցական լինելը, որը, բնականաբար, իր ազդեցությունն է թողել դեպքերի վերլուծության վրա: Հեղինակը մանրամասն շարադրում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի շրջաններում տեղի ունեցած դեպքերը, որոնք բնութագրում է ոչ թե «ապստամբություն», այլ «խռովություն», «անցքեր», «շարժում» և հար և նման ձևակերպումներով: Հատկանշական է այն փաստը, որ Կ.Սասունին Մայիսյան ապստամբության ընթացքը ներկայացնում է թաթարական շրջաններում ծագած ապստամբություններին զուգահեռ, մեկ ընդհանուր համապատկերում, որպես Առաջին հանրապետության անկախ պետականության դեմ ուղղված շարժումներ: Փաստորեն, հեղինակը բոլշևիկներին և թաթարներին (այսինքն՝ ադրբեջանցիներին) դիտարկում է միևնույն նժարի վրա դնելով՝ նրանց դիտելով հակապետական տարրեր: Հարցը դիտարկելով Ռուսաստանի քաղաքականության հենքի վրա՝ հեղինակը գտնում է, որ Հայաստանն «իր հայրենիքի և աշխատաւոր ժողովրդի ազատութիւնը ամեն բանէ վեր կը դասէր: Եղած խռովութիւնները ան դիմագրաւեց որպէս Ռուսաստանէն և Թիւրքիայէն եկած վտանգ և յաղթական դուրս եկաւ»[52]:

[48] Նույն տեղում, էջ 141-147:

[49] Նույն տեղում, էջ 151-163:

[50] Նույն տեղում, էջ 165-186:

[51] Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները (Հայաստանը 1920- ին), Պէյրութ, 1968:

[52] Նույն տեղում, էջ 190:

Ինչ վերաբերում է Հայաստանում բոլշևիկների գործունեությանը, ապա Կ. Սասունու կարծիքով, այս «բոլորովին ցուցարարական և խռովարարական բնոյթ կը կրէր, գործելակերպ մը՝ որ Հայաստանը կը տկարացնէր ի հաշիվ Ռուսաստանի և Թիւրքիոյ, ատիկա էր Ռուսաստանի իսկական նպատակը»[53] : Ավելին, նա բոլշևիկների կատարած քայլը համարում է «պարզ խռովարարական փորձ ի հաշիւ այլ պետութեան» : Իսկ բոլշևիկների անհաջողության գլխավոր պատճառը նրա համոզմամբ այն էր, որ «համակրութիւն չէին գտած Հայաստանի կազմակերպուած աշխատաւորութեան մէջ»[54] : Հանրապետության կառավարության ձեռնարկած սոցիալ-տնտեսական, ագրարային միջոցառումները ներկայացնելով և քննարկելով ՀՀ Դաշնակցության գաղափարական հայեցակետերի տեսանկյունից ու հակադրելով բոլշևիկների տեսագործնական մոտեցումներին՝ Կ. Սասունին չեշտում է. «Իրականութիւնը եկաւ ապացուցանելու, որ միակ աշխատաւորական կուսակցութիւնը Դաշնակցութիւնն էր հայ կեանքին մէջ: Մնացեալները մահուան դատապարտուած էին, իսկ բոլշևիկները գործակալները դարձան մեծն Ռուսաստանի կարմիր բանակներուն, ստրկացնելու համար ազատագրուած հայ ժողովուրդը».[55]

Ամփոփելով խորհրդահայ պատմագիտության կողմից 1920թ. Մայիսյան ապստամբության ուսումնասիրության քննական վերլուծությունը՝ հարկ է նկատել, որ առանց չափազանցության, Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության հիմնահարցերի ողջ համակարգում այս թեմայի ուսումնասիրությունը խորհրդահայ պատմագիտության համար ունեցել է շատ կարևոր քաղաքական նշանակություն: Արժանիորեն բարձր գնահատելով թեմայի ուսումնասիրության ընագավառում խորհրդահայ պատմագիտության նշանակալի ավանդը և անուրանալի ձեռքբերումները՝ ավելորդ չէ նշել, որ այն զերծ չի եղել ներկայումս արդեն անընդունելի տեսամեթոդական սխալ ձևակերպումներից:

ПРОБЛЕМА МАЙСКОГО ВОССТАНИЯ 1920г. В СОВЕТСКО-АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

КАРЯН С.М.

Резюме

Исследование этой темы в советско-армянской историографии имело важное значение в аспекте проблем первой Республики Армения. Достойно оценивая вклад армянской советской историографии в исследование этой проблемы, нелишне отметить, что многие теоретико-методические формулировки в настоящее время уже неприемлемы.

[53] Նույն տեղում, էջ 196:
[54] Նույն տեղում, էջ 197-199:
[55] Նույն տեղում, էջ 203-204: